ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11.03.2026թ. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարկվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ նաև՝ Նախագծեր, https://e-draft.am/projects/9887/about), որոնց շրջանակներում առաջարկվում է վարչական պատասխանատվություն սահմանել այն անձանց համար, ովքեր հնչեցրել կամ տարածել են ատելության խոսք, ինչպես նաև այն հարթակների համար, որոնք սահմանված ժամկետում չեն հեռացրել նման բովանդակությունը: Առաջարկվում է նաև ատելության խոսքից տուժած անձի կամ անձանց հնարավորություն ընձեռել դատական կարգով պահանջելու հեռացնել ատելության խոսք համարվող հրապարակային խոսքը, հրապարակել դատարանի վճիռը, հրապարակայնորեն ներողություն խնդրել, ինչպես նաև պահանջել ոչ նյութական վնասի հատուցում:

Չառարկելով ատելության խոսքի համար քաղաքացիաիրավական և վարչաիրավական պատասխանատվության միջոցների սահմանման գաղափարին՝ խիստ խնդրահարույց ենք համարում Նախագծերում տեղ գտած մի շարք կարգավորումներ, որոնք առաջացնում են արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակման, դրա իրացմանն անհիմն միջամտության և

հատկապես ԶԼՄ-ների կողմից ինքնագրաքննության և նրանց գործունեության մեջ միջամտելու լուրջ ռիսկեր:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու վերաբերյալ օրենքի նախագծով վարչական պատասխանատվություն առաջացնող ատելության խոսքը բնորոշվում է որպես անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելության հրապարակային խոսք, այդ թվում՝ հայհոյանք հնչեցնելը, կամ այնպիսի վարքագիծ դրսևորելը, որը նվաստացնում, ծաղրում, պիտակավորում կամ թիրախավորում է անձին կամ անձանց խմբին՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով:

Վարչական պատասխանատվություն է սահմանվում նաև համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայքի միջոցով տարածվող զանգվածային լրատվության միջոցի կողմից անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելության հրապարակային խոսք, այդ թվում՝ հայհոյանք, ինչպես նաև նյութ կամ առարկա տարածելու համար, ինչպես նաև կայքի կամ հավելվածի օգտատերերի հրապարակած խոսքը, այդ թվում՝ հայհոյանքը, նյութը կամ առարկան անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 օրացուցային օրվա ընթացքում չհեռացնելու համար: Ինչպես նաև՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելության հրապարակային խոսք, այդ թվում՝ հայհոյանք, ինչպես նաև նյութ կամ առարկա տարածելու և սահմանված ժամկետում չհեռացնելու համար:

Ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության նախատեսման համատեքստում՝ ատելության խոսքի տրված սահմանումը չափազանց ընդարձակ է,

հակասում է միջազգային չափանիշներին, ինչպես նաև իրավական որոշակիության պահանջներին և մի շարք դեպքերում կարող է հանգեցնել թույլատրելի քննադատության շրջանակներում հնչեցված արտահայտությունների համար վարչական պատասխանատվության միջոցների կիրառմանը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ CM/Rec(2022)16 հանձնարարականից և դրա բացատրական հուշագրից ուղղակիորեն բխում է, որ պետությունները ատելության խոսքի կարգավորմանն առնչվող իրենց օրենսդրությամբ պետք է կիրառեն պարզ և հստակ տերմինաբանություն և սահմանումներ՝ զերծ մնալով անորոշ և ընդհանրացված ձևակերպումներից: Իրավական նորմերի ձևակերպումները պետք է հնարավորություն տան անձանց կարգավորել իրենց վարքագիծը և կանխատեսել իրենց գործողությունների հնարավոր իրավական հետևանքները (Altuğ Taner Akçam v. Turkey, no. 27520/07, 25 January 2012, § 93 et seq.; and, Delfi AS v. Estonia, cited above, § 121):

Նույն հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն արդյունավետ իրավական և գործնական երաշխիքներ՝ ատելության խոսքին առնչվող օրենսդրության ոչ իրավաչափ կիրառման կամ ցանկացած հնարավոր չարաշահման դեմ, հատկապես այն դեպքերում, երբ այն կարող է օգտագործվել հանրային քննարկումները սահմանափակելու, քննադատական խոսքը, քաղաքական ընդդիմախոսներին կամ փոքրամասնություններին լռեցնելու նպատակով:

Հանձնարարականի համաձայն՝ ատելության խոսքի լրջության աստիճանը գնահատելիս և որոշելիս, թե տվյալ արտահայտության համար արդյոք պետք է կիրառվի որևէ տեսակի պատասխանատվություն և, եթե այո՝ ինչ տեսակի, անդամ պետությունների իրավասու մարմինները և այլ շահագրգիռ սուբյեկտները պետք է,

առաջնորդվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի չափանիշներով, հաշվի առնեն հետևյալ գործոնները և դրանց փոխկապակցվածությունը՝

- արտահայտության բովանդակությունը,
- արտահայտության պահին առկա քաղաքական և սոցիալական համատեքստը,
- արտահայտության հեղինակի մտադրությունը/դիտավորությունը,
- արտահայտության հեղինակի դերն ու հասարակական դիրքը,
- արտահայտության տարածման եղանակները,
- արտահայտության՝ վնասակար հետևանքներ առաջացնելու ունակությունը, այդ թվում՝ դրանց անմիջականության աստիճանը,
- լսարանի բնույթն ու ծավալը,
- ինչպես նաև թիրախավորված խմբի բնութագրիչները։

Հակառակ վերոգրյալ չափանիշների՝ Նախագծով տրված զանցակազմի սահմանումը հիմնված է չափազանց լայն չափանիշների հիման վրա՝ «նվաստացնելու», «ծաղրելու», «պիտակավորելու» և «թիրախավորելու» գործողությունների թվարկմամբ՝ դրանց հնարավոր վնասակար հետևանքների բացակայության պայմաններում։

Այսպիսի գործողությունների ձևակերպումը չափազանց լայն է և կարող է ներառել նաև այնպիսի արտահայտություններ, որոնք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում պաշտպանվում են որպես արտահայտվելու ազատության իրավունքի մաս։ Մասնավորապես, Handyside v. United Kingdom գործում ՄԻԵԴ-ը հստակ շեշտել է, որ արտահայտվելու ազատությունը տարածվում է նաև այնպիսի արտահայտությունների վրա, որոնք կարող են «վիրավորել, ցնցել կամ վրդովեցնել»։ Առաջարկվող կարգավորման պայմաններում համապատասխան արտահայտությունների կատարման արդյունքում որևէ վնասակար հետևանք կամ որևէ այլ նախապայման սահմանված չէ։

Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը[1] ընդունում է, որ ատելության խոսքը կարող է դրսևորվել նաև առանց ուղղակի բռնության կոչերի՝ ներառելով որոշ դեպքերում անձանց նկատմամբ իրականացվող հարձակումները, որոնք դրսևորվում են բնակչության որոշակի խմբերին վիրավորելու, ծաղրի ենթարկելու կամ զրպարտելու միջոցով, այնուամենայնիվ համապատասխան միջամտությունները ենթակա են խիստ մեկնաբանության և կարող են համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ հիմնավորված է ժողովրդավարական հասարակությունում դրանց անհրաժեշտությունը։ Այս համատեքստում պահանջվում է արտահայտության բովանդակության, կոնկրետ քաղաքական և սոցիալական համատեքստի, արտահայտության հեղինակի դիտավորության, ինչպես նաև վնասակար հետևանքների առաջացման իրական հավանականության և դրանց անմիջականության համակողմանի գնահատում։ Մինչդեռ Նախագծի ձևակերպումների ուժով պատասխանատվությունը նախատեսվում է առանց վերոնշյալ չափանիշների պատշաճ ամրագրման, ինչպես նաև համապատասխան արտահայտության լրջության ու վնասի շեմի սահմանման։ Այսինքն, կարգավորումները չեն համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, պարունակում են արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակման և վարչական պատասխանատվության միջոցների կամայական կիրառման բարձր ռիսկեր։ Ավելին, բավարար հստակ չեն վարչական պատասխանատվության և գործող օրենսդրությամբ քրեական պատասխանատվության սահմանները, ինչը սրում է իրավական որոշակիության և պատասխանատվության միջոցների կամայական կիրառման ռիսկերը։

Արձանագրենք նաև, որ խնդիրը ավելի է սրվում՝ հաշվի առնելով սահմանված պաշտպանվող հիմքերի շրջանակը։ Ներկայացված ցանկում առավել խնդրահարույց

են հետևյալ պաշտպանվող հիմքերը՝ «քաղաքական կամ այլ հայացքներ», «աշխարհայացք» և «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ»։ Մասնավորապես, քաղաքական հայացքներին առնչվող հիմքը ատելության խոսքի համատեքստում չափազանց ռիսկային է՝ հաշվի առնելով, որ քաղաքական խոսքը առավելագույն պաշտպանության ենթակա արտահայտության ձևերից է և դրա շրջանակներում նախատեսված սահմանափակումը կարող է հանգեցնել ընդդիմադիր կարծիքների կամ հանրային քննադատության ճնշման։ «Աշխարհայացք» եզրույթը չափազանց լայն և անորոշ է, ինչը խաթարում է իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքները։ Միևնույն ժամանակ սահմանված ցանկում նախատեսված չեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերը։ Իսկ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը հնարավորություն է ստեղծում կիրառելու այս դրույթը կամայական և անկանխատեսելի եղանակով՝ հայեցողաբար և ոչ իրավաչափորեն ընդլայնելով դրա կիրառման շրջանակը առանց որևէ սահմանափակման։

Ատելության խոսքի սահմանման անբավարար հստակությունն ու անհրաժեշտ նախապայմանների բացակայությունը մեծ հավանականությամբ կարող են հանգեցնել իրավիճակի, երբ զանգվածային լրատվության միջոցները հարկադրված կլինեն իրականացնել բովանդակության ինքնուրույն և առավելապես կանխարգելիչ/խստացված իրավական գնահատում և, հնարավոր պատասխանատվությունից խուսափելու նպատակով, հեռացնել նաև իրավաչափ և արտահայտվելու ազատության շրջանակում պաշտպանվող արտահայտությունները։

Հարկ է նշել նաև, որ Նախագծով սահմանված չէ համապատասխան վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի ենթակայությունը։

Ատելության խոսքի սահմանմանն առնչվող բովանդակային խնդիրները նույն կերպ արդիական են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու վերաբերյալ նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում: Ավելին, քաղաքացիական օրենսգրքով նախատեսվող ոչ նյութական վնասի փոխհատուցման հնարավորությունը նախատեսվում է անկախ վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքից, մինչդեռ նույն հոդվածով չեն սահմանվում ապացուցման պարտականությունների բաշխման առանձնահատկությունները, ինչպես նաև հնարավոր գործին մասնակցող այլ անձանց դատավարական իրավունքների ապահովման առանձնահատկությունները: Միաժամանակ, անհստակ է ատելության խոսք համարվող հրապարակային խոսքը, նյութը կամ առարկան հեռացնելու կամ վճիռը հրապարակելու՝ դատարանի կողմից կիրառված միջոցը վերաբերում է բացառապես ԶԼՄ-ներին, թե նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, քանի որ մի շարք դեպքերում համապատասխան ատելության խոսք հնչեցրած անձը կարող է չնույնանալ ԶԼՄ-ի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Նախագծերը իրենց ներկայիս խմբագրությամբ պարունակում են արտահայտվելու ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, ԶԼՄ-ների գործունեության վտանգման և նախատեսված իրավական պատասխանատվության միջոցների կամայական կիրառման լուրջ ռիսկեր: Նշված հանգամանքներում պահանջում ենք Նախագծերը անհապաղ հանել շրջանառությունից և լրամշակել դրանք՝ ապահովելով քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների և այլ շահագրգիռ կողմերի լիարժեք և ներառական մասնակցությունը համապատասխան քննարկումների շրջանակներում:

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

«Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն»

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

«Հելսինկյան ասոցիացիա» ԻՀԿ

---

[1] Féret v. Belgium, Vejdeland and Others v. Sweden